

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 158

Թէպէտ Պեղագեանութիւնը դատապարտեց եւ Օգոստինոսի վարդապետութիւնները հռչակեցին որպէս Եկեղեցու հաւատքը՝ 5րդ դարում, սակայն Օգոստինոսի տեսանկիւնի դէմ հակառակութիւն յառաջացաւ, հաստատելով Պեղագիտի եւ Օգոստինոսի ուսուցումների միջին մի կէտ: 16րդ դարում այս տեսանկիւնը ճանաչեց որպէս Կիսա-Պեղագեանութիւն (Semi-Pelagianism):

Յովհաննէս Կասիանոս – Կային Կիսա-Պեղագեանութեան մի քանի ազդեցիկ կողմնակիցներ՝ եւ դրանցից մէկն էր Յովհաննէս Կասիանոսը, որը ծնեց շուրջ 360ին Ք.Յ., Փոքր Սկիւթիայում (ներկայ Ռումանիա): Նա դարձաւ Յովհաննէս Զրիստոստոմի աշակերտը, եւ ձեռնադրեց Արեւելեան Եկեղեցուց որպէս մի սարկաւազ, եւ յետագայում դարձաւ Մասիլիա վանքի հիմնադիրն ու վանահայրը (Ֆրանսիա): Հակառակ Պեղագիտին, Կասիանոսը հաստատեց թէ Ադամի մեղքը սահմանափակած չէր իրեն այլ ազդեց իր սերունդին: Թէպէտ նա ուսուցանեց որ բոլոր մարդիկ ծնունդ են մեղաւոր, սակայն նա մերժեց Օգոստինոսի նախնական մեղքի գաղափարը, հաստատելով թէ անկումից յետոյ մարդու կամքը վիրաւորւած է եւ մեղքին ընդունակ, բայց ոչ թէ մեռած ու մեղքին բոլորովին հակամէտ, եւ ուստի նա կարող է դառնալ Աստծուն: Հերքելով Պեղագիտի տեսանկիւնը, Կասիանոսը ուսուցանեց թէ փրկութեան համար Աստծոյ շնորհքը հարկաւոր է, բայց հակառակ Օգոստինոսին նա հաստատեց թէ մարդիկ իրենց ազատ կամքով կարող են ձգտել Աստծուն, որը ապա պիտի օգնէր նրանց: Նաեւ Կասիանոսը մերժեց Աստծոյ փրկարար շնորհքի անդիմադրելիութիւնը, եւ հաւատացած էր որ նախասահմանութիւնը հիմնւած է Աստծոյ մարդկանց ապագայ արարքների նախագիտութեան վրայ:

Թէպէտ Կասիանոսը մեռաւ 435ին, սակայն այս վեճերը շարունակեցին բազմաթիւ տարիներ: 496 թականին Գելասիոս Առաջին Պապը դատապարտեց Կասիանոսի գրութիւնները, եւ ապա 529ում Օրէնջի Եկեղեցական Խորհրդում (Ֆրանսիա), Կասիանոսի եւ իր նման ուրիշների գաղափարները դատապարտեցին, եւ Օգոստինոսի ուսուցումները դարձեալ հռչակեցին որպէս Եկեղեցու վարդապետութիւնները: Թէպէտ Արեւմտեան Եկեղեցին դատապարտեց Կիսա-Պեղագեանութիւնը 529 թականին, սակայն Հռովմէական Կաթոլիկ եկեղեցին յետագայում ճանաչեց Կասիանոսին որպէս մի սուրբ, եւ այդպէս է նոյնիսկ այսօր: Արեւելեան եկեղեցին երբեք չհատապարտեց Կասիանոսի ուսուցումները, ու նաեւ ճանաչում է նրան որպէս մի սուրբ:

Դեզիդէրիոս Էրագմոս – Դեզիդէրիոս Էրագմոսը ծնեց Ռոտտերդամ, Հոլանտայում, 1466 թականին: 25 տարեկանում նա ձեռնադրեց որպէս մի քահանայ: Նա մի ասուածաբան էր եւ Վերածննդարեան մարդաբան: Նա լրացրեց Նոր Կտակարանի Նոր Լատիներէն եւ Յունարէն թարգմանութիւնները՝ Յունարէնը դառնալով Ընկալեալ Բնագրի հիմնուքը՝ որը Ուիլիամ Թինդէլը գործածեց իր Նոր Կտակարանի Անգլերէն թարգմանութեան համար, եւ ապա նաեւ Քինգ Ջեյմզ թարգմանութեան համար:

Մարթին Լութեր – Մարթին Լութերը ծնեց Այզլըբէն, Գերմանիայում, 1483 թականին: 1507ին ձեռնադրեց որպէս մի Հռովմէական Կաթոլիկ քահանայ: 1512ին նա ստացաւ ասուածաբանութեան դոկտորա տիտղոսը Վիթենբըրգ համալսարանից՝ եւ դարձաւ Ասուածաշնչի փրոֆեսոր: Նա զայրացած էր Եկեղեցու չարաշահումների վերաբերեալ՝ ներառեալ վաճառած ներողագրերը մեղքերի թողութեան համար. եւ ցանկանալով այս նիւթի նկատմամբ մի հանրային բանավեճ նա գամեց իր հիմն շատ յայտնի Իննսուն-Հինգ Թեզիսները Վիթենբըրգի Բերդ եկեղեցու դռանը, Հոկտեմբեր 31ին 1517 թին: Ուստի, սկսեց Բողոքական Վերակազմութիւնը:

1524ին Էրագմոսը գրեց «Զննադատութիւն Ազատ Կամքի Նկատմամբ» գիրքը, ուր նա քննադատեց ազատ կամքի մասին եղած Վերակազմութեան տեսանկիւնը: Յաջորդ տարում, որպէս պատասխան Մարթին Լութերը գրեց «Կամքի Գերութիւնը»: Թէպէտ երկուսն էլ ընդունեցին փրկութեան համար եղած Աստծոյ շնորհքի հարկաւորութիւնը, սակայն նրանց քննարկած հիմնական հարցն էր ընկած մարդու ազատ կամքի բնութիւնը: Լութերը ուսուցանեց թէ Ասուած սահմանել է ամէն ինչ որ տեղի է ունենում՝ ներառեալ ընտրեալների փրկութիւնը: Էրագմոսը պախարակեց այդպէս մի Օգոստինոսական տեսանկիւն: Նա սահմանեց ազատ կամքը որպէս՝ «Մարդկային կամքի զօրութիւնը որով մի մարդ կարող է ուղղել ինքնիրեն դէպի այդ բաները որ յախտեանական փրկութեան են առաջնորդում, կամ այդ նոյն բաներից հեռու դառնալ»: Լութերի համար այս ներկայացրեց Պեղագիտի ազատ կամքի գաղափարին վերադարձը: Նա վիճեց թէ ընկած մարդը չունի այսպէս մի ազատ կամք, քանի որ նրա կամքը մեղքի գերի է, եւ առանց շնորհքով կարող է անել ոչ մի բարիք: Էրագմոսը նաեւ վիճեց որ եթէ Ասուած պատկիրում է մի բան մարդուն, ապա այդ ակնարկում է որ մարդը ունի դրա հնազանդելու բարոյական զօրութիւնը: Լութերը պատասխանեց թէ՛ «Ասուածաշունչը ... օգտագործում է այս արտայայտութիւնները որպէսզի խթանել եւ գրգռել [մարդուն], որ նա վստահ փորձառութեամբ իմանայ թէ նա ինչքան անկարող է անելու դրանցից որեւէ մէկը» (Հռովմայեցիս 3:20, Գաղատացիս 3:24):

Ուրեմն պարզ է որ նոյնիսկ թէպէտ Կիսա-Պեղագեանութիւնը դատապարտեց Արեւմտեան Եկեղեցու կողմից 6րդ դարում, այդ շարունակեց ուսուցանել Եկեղեցու մէջ, նոյնիսկ մինչեւ Բողոքական Վերակազմութեան ժամանակը: